ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻԴՐՈԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան «16» հունիսի, 2026թ.

# Հ Ր Ա Մ Ա Ն 232

## Գ.00.08 – «ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՄԱԿԱԲՈՒԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ԷԿՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ 2026-2027ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ԳԱԱ նախագահության 2020 թվականի հոկտեմբերի 07-ի թիվ 6/1773 որոշմամբ հաստատված ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության 23-րդ կետի 10-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Սարգիս Աղասու Աղայանի 15.06.2026 թվականի հրամանագիրը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Ստեղծել հանձնաժողով Գ.00.08 – «Կենդանաբանություն. Մակաբուծաբանություն. Էկոլոգիա» մասնագիտությամբ 2026-2027 թթ. ուսումնական տարվա, պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ընդունվող դիմորդների գործերին ծանոթանալու համար:
2. Սահմանել հանձնաժողովի հետևյալ կազմը.
   - Գևորգյան Գոռ Արտակի – կ. գ. թ., «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գիտական գծով փոխտնօրեն, /նախագահ/ ,
   - Հայրապետյան Վահրամ Տորիկի – կ.գ.դ., Մոլեկուլային մակաբուծաբանության լաբորատորիային կից Մանր կաթնասունների մակաբուծաբանության գիտական խմբի ղեկավար
   - Խաչատրյան Հասմիկ Գուրգենի – կ.գ.թ. «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գիտքարտուղարի պարտականությունները կատարող:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ս. Աղայան

Գործերի ընդունում՝
հունիսի 15 – հուլիսի 07, 2026թ